

Լ. Ս. Բարսեղյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՌԱԶՄԱՔԱՂԱՔԱԿԱՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ

Ինչպես վկայում են խեթական քնադրերը, մ. թ. ա. XV դարի վերջերին խեթերի հիմնական թշնամիները հյուսիսում և արևելքում կասկայական և հայաստան ցեղերն էին, որոնց հաճախակի հարձակումները լուրջ վտանգ էին ստեղծել Խույնիսկ խեթական թագավորության բուն կենտրոնի համար։ Դաշն կնքելով կասկացիների հետ, հայաստան թագավոր Կարանին, օգտու-վելով խեթերի և Միտանիի միջև սկսված պատերազմից, հարձակվում է Հայաստան-Ազգիին սահ-մանակից խեթական Սամուխա քաղաքի վրա և ավերում այն¹։ Միաժամանակ Հայաստան-Ազգիի կազմի մեջ մտնող Բսուվա երկիրը, որը մի տեսակ պատենշի դեր էր կատարում դեպի խեթերի թշնամաբար օրամագրված Խուրի-Միտանիի թագավորության համար, հարավից Խույնիսկ հա-ճակվում է խեթերի վրա։ Խեթական Սամուխա քաղաքը գրավելուց հետո Կարանին հարձակվում է Բեզարամա երկրի վրա։ Հայաստանի ռազմական այսպիսի ակտիվ գործողությունների արդյունքը եղավ այն, որ շուտով խեթերի դեմ սկսվեցին սպասումներ նրան ենթացող շուրջ² և երկրներ³։

Խեթական թագավոր Բուդիսալիա III շտապ կարգով կենտրոնացնելով իր ուժերը, իր սղա-յի՝ Սուպիլուլիումայի գլխավորությամբ մի առանձին զորախումբ է ուղարկում Հայաստանի վրա։ Կարանին արագ կերպով թուլնում է Սամուխա քաղաքը և ետ քաշվում դեպի իր սահմանները։ Հայաստանի հետպահող Սուպիլուլիուման լուր ստանալով հարավում ծագած նոր ապս-տամբության մասին, շտապում է այնտեղ։ Սրանից օգտվելով, Կարանին ձեռնարկում է մի նոր արշավանք, այս անգամ հյուսիս-արևմտյան ուղղությամբ։ Կարճ ժամանակամիջոցում ճնշելով ապստամբությունը, Սուպիլուլիուման վերադառնում է դեպի Հայաստանի սահմանները և Կու-մախա քաղաքի մոտ ճակատամարտ է տալիս, պարտության մատնելով Կարանին⁴։

Խեթերի այսպիսի առաջխաղացումը դեպի հարավ-արևելք լուրջ վտանգ էր սպառնում նաև խուրիների և Միտանիի թագավոր Տուշրատան ձեռնամուխ է լինում պատերազմական գործո-ղություններին նախապատրաստվելու գործին։ Օգտվելով հարմար առիթից, Բսուվան նորից սպաստամբում է։ Սուպիլուլիուման արագ կերպով անցնում է Եփրատը և երկրորդ անգամ հրավում Իսուվան ու ետ վերցնում այնտեղ ապաստան գտած ստրուկներին։ Բսուվան միացնե-լով իր թագավորությանը, Սուպիլուլիուման ավելի սրեց խեթ-միտանիական հարաբերություն-ները⁵։ Խեթական աղբյուրները Հայաստանի թագավոր Կարանիի և Բուդիսալիա III-ի հետագա արշավանքների մասին դեպի Հայաստան-Ազգիին լուր են ու միայն որոշ ժամանակ անց Սուպիլ-ուլիումայի դաշնագրերը նորից վերագրում հայաստանիին։ Կարանիից հետո խեթական աղբյուրները, որպես Հայաստանի ցեղային միության առաջնորդ հիշատակում են Խուկկանային։ Հայաստան-Ազգիի ցեղային միության առաջնորդ կամ թագավոր Խուկկանայի մասին միակ վկա-յությունը հանդիպում ենք խեթական թագավոր Սուպիլուլիումայի և Խուկկանայի միջև կնքված դաշնագրում։

Առանձնակի գիտական մեծ արժեք ունի գիվանագիտության պատմության գանձարանը մտած աշխարհի ամենահնագույն գիվանագիտական փաստաթղթերից մեկը այս դաշնագիրը, որտեղ պահպանվել են Հայաստան-Ազգիի սոցիալ-տնտեսական պատմությանը վերաբերող արժեքավոր տեղեկություններ։

¹ H. G. Güterbock, The Deeds of Suppiluliuma as told by his son, Mursili II, „Journal of Cuneiform studies“, 1956, vol. X, № 2, fr. 4.

² E. Weidner, Politische Dokumente aus Kleinasien, Leipzig, 1923, էջ 5—7։

³ H. G. Güterbock, նույն աեղում, fr. № 13.

⁴ H. Winkler, Die Arien in den Urkunden von Boghaz-kei, «Հանդէս ամսօրհայ», 1913, № 4, էջ 205—206։

Դաշնագրում հիշատակումներ կան հուկկանայից առաջ հայաստան գահի վրա բարձրացած Մարիյա թագավորի մասին, որը հրավիրվելով խեթերի մայրաքաղաքը, Թուդիսալիա III-ի հրամանով սպանվել է Սուպպիլուլիուման խորհուրդ տալով հուկկանային հայասացիների մոտ վերացնելու բրոջ և բարեկամների հետ ամուսնանալու սովորությունը, դաշնագրում հիշում է նաև Հայաստայի այդ թագավորին Սուպպիլուլիուման ասում է. «Պալատական կնոջ հետ դործ ունենալուց խուսափիր, գիտես թե Մարիյան ով էր և ինչ պատճառով մահացավ: Մի՞թե բրմուհին շանցավ և նրան վատ մտքով շնայեց: Արեգիս հայրը պատուհանից նրան տեսնելով բռնեց և ասաց. «Ի՜նչու նրան նայեցիր: Նա այդ պատճառով մահացավ: Ուրեմն խուսափիր այն բանից, որի համար մարդ սպանվեց և չափազանց զգույշ եղիր»:

Ն. Ադոնցը գտնում էր, որ Մարիյան հայաստան գահի այնպիսի հավակնորդներից էր, որին դեմ էին խեթերը, Իրենց դրածուին՝ հուկկանային գահ բարձրացնելու համար նրանք Մարիյան հրավիրեցին հաթթուսա և դավադրաբար սպանեցին, հետագայում պատճառաբանելով, թե դա կատարվեց խեթական արքունիքում պալատական կանանց նկատմամբ բռնություն գործադրելու հետևանքով:

Հավանաբար Մարիյան կարաններից հետո Հայասա-Ազգիի ցեղային միության գլուխ կանգնած այն առաջնորդներից էր, որը մեծ վտանգ էր սպառնում խեթերին և իր հաճախակի հարձակումներով կարողացել էր նվաճել խեթական թագավորության սահմանամերձ քաղաքներն ու զգալի ավար վերցնել: Պատահական չէր, որ Մարիյայի սպանությունից հետո խեթական թագավորը Հայասայի նոր թագավորից՝ հուկկանայից պահանջում էր ետ վերադարձնել զրաված քաղաքներն ու գերիներին: Սուպպիլուլիուման իր դաշնագրում հուկկանային խստորեն պատվիրում է. «Ազգադ, որ Մարիյային կնության էիր տվել, նույնպես ետ վերցրու և (նրա) խորթ Լըբորը տուր»:

հուկկանան անկասկած ցեղային ավագանու ազդեցիկ անգամներից էր և բարեկամական կապերի մեջ էր Մարիյայի հետ ու նրան կնության էր տվել իր աղջկան:

Մարիյա I-ի (բանի որ խեթական ալքյուրները հիշատակում են նաև մեկ ուրիշ Մարիյայի) սպանությունից հետո Թուդիսալիա III-ին փոխարինած Սուպպիլուլիուման արդեն նվաճված Հայասա-Ազգիում ցեղային միության գլուխ է կանգնեցնում Մարիյա I-ի կնոջ հորը՝ հուկկանային: Խաթթուսա հրավիրելով հուկկանային, հայասական ցեղային ավագանու ազդեցիկ անդամներին և ոմն Մարիյայի (Մարիյա II), Սուպպիլուլիուման շտապ կարգով հատուկ դաշն է կնքում նրանց հետ: Ըստ այդ դաշնագրի Հայասա-Ազգի ցեղային միության առաջնորդը պարտավորվում էր

1. Ընդունել խեթերի գերիշխանությունը, քաղաքական նամակներում և դաշնագրերում այլևս թագավոր չանվանվել և խեթական թագավորների հետ համեմատած երկրորդական դիրք գրավել:
2. Պատերազմների ժամանակ և ապստամբությունների ճնշման դեպքում փոխադարձաբար օգնել խեթական թագավորին, նրա որդիներին ու բարեկամներին:
3. Ետ վերադարձնել զրաված խեթական սահմանամերձ քաղաքներն ու գերիներին:
4. Զփակել խեթերի համար դեպի Միդագետք տանող ճանապարհը:
5. Ամուսնանալ Սուպպիլուլիումանի բրոջ հետ, բոլոր կանանց մեջ առաջնությունը տալ նրան, որդիների հետ այլևս չամուսնանալու պայմանով:
6. Վերջ սալ բեռամուսնության (բրոջ հետ ամուսնանալու) սովորությանը հայասացիների մոտ:

Դաշնագրի երկրորդ մասում Սուպպիլուլիուման խոստանում է հուկկանային փոխադարձ օգնության դեպքում իր պաշտպանության տակ վերցնել նրա որդիներին և ոմն Մարիյայի: Ե. Ֆորերի կարծիքով այս Մարիյա II Հայասայի ազդեցիկ զորահրամանատարներից էր և հուկկանայից հետո մեծ հեղինակություն ուներ արքունիքում: Սակայն մեզ թվում է (ինչպես նկատել է նաև Ն. Մարտիրոսյանը), որ Մարիյա II հուկկանայի ժառանգորդներից էր և հայասական գահի անմիջական հավակնորդներից: Մարիյա II-ի մասին խեթական հետագա աղբյուր-

⁵ J. Friedrich, Staatsverträge des Hethitischen-Reiches, H. „Mitteilungen der Vorderasiatisch-Aegyptischen Gesellschaft“, 1930, № 34, § 34.

⁶ N. Adontz, Histoire d'Arménie, Paris, 1946, էջ 31:

⁷ J. Friedrich, նշված աշխատությունը:

⁸ E. Forrer, Haisa-Azzi, „Caucasica“, 1931, № 0, էջ 19:

⁹ Ն. Մարտիրոսյան, Խարբերդի շրջանները՝ հայոց հնագույն օրրանը, տպված Վեսթ-բերդ և իր ոսկեղեն դաշտը՝ հուշամատյանում, 1957, էջ 22—27:

ները լուում են, ինչպես երևում է, Մարտի 11, որը հավանաբար հուկկանայի որդին, թողը կամ փեսան էր, շարունակել էր խնթերի նկատմամբ վարել քաղաքականություն և ուղղակի գործողություններ չի ձեռնարկել, Ստորև, մեջ բերման կարգով օգտագործում ենք դաշնագրի հիմնական մասերը:

«Այսպես է [խոսում] Արեգի՝ Ուսպիլուի մասն, հաթթի երկրի թագավորը, Տե՛ս, հուկկանա, դու հասարակ, բայց միակ հերոսն էիր, որին ընդունեցի, ազնվականության աստիճան տալով: Խաթթուսայի մեջ քեզ [ինչպես նաև] Հայաստանի ժողովրդին բարեկամաբար ներկայացրեցի և բոլորս էլ քեզ կնություն տվի:

Եվ ողջ հաթթի երկիրը, Հայաստան երկիրը, ողջ աշխարհը, լինի երկրից ներս կամ դուրս, բոլոր մասին լսեցին:

Ուրեմն դու՝ հուկկանա, միայն Արեգիս իշխանությունը ճանաչիր, նաև որդուս, որին ես՝ Արեգս կնշանակեմ, պետք է ամեն ոք ընդունի, ժողովներում ներկայացվի և նույնպես դու՝ հուկկանա, նրան ընդունիր: Նաև մյուս որդիներին՝ գահաժառանգի եղբայրներին և իմ եղբայրներին բարեկամաբար ընդունիր որպես եղբոր և հավասարի: Ուրիշ որե՛կ մեկին, ով էլ լինի, ինչ էլ լինի, մի ընդունիր Արեգիցս դադունի: Ընդունիր միայն Արեգիս և պաշտպանիր նրան որպես Արեգի:

Եթե դու՝ հուկկանա, ապագայում ինձ՝ Արեգիս, որը քեզ բարձրացրեց, բարեկամաբար չպաշտպանես, եթե դու ինչպես բոլոր զուլան ես սիրում, նույնպես էլ Արեգիս զուլան չսիրես ու Արեգիս չմեծարես, եթե դու, ինչպես զուլանի և բոլոր նկատմամբ սեր ես ցույց տալիս և ձեռքբերվի պաշտպանում, նույնպես էլ Արեգիս զուլան, Արեգիս անձի հանդեպ սեր ցույց չտաս և ձեռքբերվի էլ չպաշտպանես ու Արեգիս վերաբերյալ գործերին նախապատվություն չտաս և կամ եթե Արեգիս մասին որե՛կ վատ բան լսես, եթե ինձնի՜ր գաղտնի պահես և ինձ չասես և կամ այն մարդուն պաշտպանես և ... երդումների աստվածները թող քեզ ոչնչացնեն: Ուրեմն դու՝ հուկկանա, բարեկամաբար Արեգիս օգնիր, միայն Արեգիս ճանաչիր և ուրիշ որե՛կ մեկին մի ընդունիր: Նույնպես ես՝ Արեգս, որպես բարեկամ կպաշտպանեմ քեզ, ինչպես և որդիներիդ և որդիս էլ որդիներիդ կպաշտպանի...

...Տե՛ս, այժմ քեզ այս պատճառով երդվեցնել տվի ու տե՛ս, մենք այս դաշնագրության համար հազար աստվածների դասաստանի կանչեցինք... (Ընագրում թվարկվում են խնթական և հայաստական մի խումբ աստվածությունները):

...Եթե դու հուկկանա, միայն Արեգիս պաշտպանելու և Արեգիս կողմն անցնելու լինես, այս երդումները թող քեզ պահպանեն և հետո կտեսնես, թե ինչպես կմեծանաս Արեգիս ձեռքի տակ:

Եթե ես՝ Արեգս պատերազմում գտնվեմ, պատերազմելու գնամ օգնության համար և դու էլ ինձ միանալով պատերազմի գաս, և եթե ես թշնամի քաղաքի կամ երկրի վրա հարձակվեմ և դու ինձ պահպանես ու հսկող լինես և Արեգիս հոգ տանես այնպես, ինչպես հոգ կտանես անձիդ, այսպես ասելով:

...Իմ բրուջը, որին ես՝ Արեգս քեզ կնություն տվեցի, շատ հարազատ և խորթ բույրեր ունի և դու նրանց էլ սիրաշահեցիր, քանի որ նրանց բրուջը կնության վերցրիր: Բայց խնթերի երկրի մեջ օրենք է, որ եղբայրը բրուջ կամ հորեղբոր կամ մորեղբոր աղջկա հետ չի կարող ամուսնանալ, որովհետև արգելված է: Իսկ ես, ով այդպես կանի, Խաթթուսայի մեջ չի կարող ապրել, կսպանեն:

Երբ ձեր երկիրը վայրենի է, այնտեղ սովորություն է, որ եղբայրը բրուջը, հորեղբոր կամ մորեղբոր աղջկան կնության վերցնի:

Խաթթուսայի մեջ այս բանը արգելված է:

Եթե բոլոր կգա կնույց հարսգատ կամ խորթ բույրը, հորեղբոր կամ մորեղբոր աղջիկը, նրանց ուտելիք և ըմպելիք տուր, կերեր և խմեցիր, մտքներդ չպղտորեք: Նրանց հետ կենակցելու փորձ չանես: Արգելված է: Այդպիսի բան չլիործես, մահապատիժ կլինի:

Եթե որե՛կ մեկը ցանկանա քեզ դրդել, մի նայիր և չմեղանչես, քեզ երդվեցնել կտամ:

Պալատական կանանցից նույնպես դադա՛ցիր, լինեն նրանք ազատ կամ քրմուհի, չմոտենաս, խոսք չենտես...

...Եվ խնթացի գերիներին, որոնք Խաթթի երկրից Հայաստան երկիրն են տարվել, մեզ վերադարձրեք: Ինչպես նաև Խաթթի երկրի սահմանամերձ քաղաքները մեզ վերադարձրեք: Ով խնթացի գերիներին հանձնել չցանկանա և նրանց տեղը գաղտնի կպահի, դու, հուկկանա բռնիր նրան և ասա, «Ի՛նչու չես հանձնում»...

...լինի մարդ, հրամանատար, արքայական ամրոց, լինի թագավորի եղբայր, լինի հետևակազոր և մարտակառք, լինի ստրուկ կամ ստրկուհի, լինի որևէ վայր, որևէ երկիր, ով էլ լինի... Երբ ձեզ գրելու լինեմ և դուք հետևակազորով և մարտակառքով [օգնություն] չգար և չիմանար, ասելով. «Գնանք, թե չգնանք» և կամ թե մի խեղճացի ձեզ, հայասացիներ, շողորթորթելու լինի. ձեզ սիրաշահելու համար և դուք, այդ պատճառով ինձնից բաժանվեք և նրա կողմն անցնեք, եթե այդպիսի փորձ անելու լինեք, այս երդումները թող ձեզ ձեր կանացով, ձեր զավակներով, ձեր տնով և ունեցվածքով միասին ոչնչացնեն:

Ինչ որ ձեզ գրելու լինեմ և եթե դուք ասածներին չնայեք, կամ ձեզ եթե գրեմ և ձեզնից հետևակազոր ու մարտակառք պահանջեմ, եթե անմիջապես ինձ օգնություն չհասնեք և կամ եթե որևէ տրիշ թշնամի իմ դեմ ճակատամարտի ելնի և ես ձեզ գրեմ ու դուք անմիջապես օգնություն չգար և կամ անտեղյակ լինել, այս երդումները թող ձեզ ոչնչացնեն:

Եթե դուք, Հայասա քաղաքի մարդիկ, ապագայում ինձ րսրեկամաբար պաշտպանեք, ես էլ, ձեզ, հայասացիներ Մարիյային և հայասացի ցեղակիցներին րարեկամաբար պետք է պաշտպանեմ, նաև Հայասա երկիրը իբրև րարեկամ պետք է պաշտպանեմ:

Եթե դուք Արեգիս հետ լավ վարվեք և Խաթթի երկիրը րարեկամաբար պաշտպանեք, ես՝ Արեգս էլ ձեզ հետ լավ պետք է վարվեմ:

Իսկ եթե որևէ շարիք կատարեք, ես՝ Արեգս էլ ձեզ շարիք պիտի հասցնեմ և ես՝ Արեգս աստվածների մոտ երդմնազանց չպետք է երևամ:

Ահա, լսեցեք հայասացիներ և դու Մարիյա, եթե այս խոսքերը, որոնց համար ձեզ երդվեցնել տվեցի, չհարգեք, այս երդումները թող քո անձը, քո կանացով, զավակներով, եղբայրներով, արտերով, քաղաքներով, այգեստաններով ու խոպաններով, եզներով, ոչխարներով և ունեցած շունեցածով միասին թող անմիջապես ոչնչացնեն ու սև հողի տակով անեն:

Բայց ես չեմ ցանկանում Հայասայի ժողովրդին, Մարիյային և Հայասա երկրին շարիք հասցնել¹⁰:

Մարիյա II-ից անմիջապես հետո հայասական զահն է քարձրանում Աննիան, որը դաշն կնքելով կասկայական Տիրեա երկրի թագավոր Պիխտունիայի, ինչպես և Արզավա, Կիզվատնա երկրների ապստամբ թագավորների հետ, հարձակվում է խեթերի վրա: Հարձակման է դիմում նաև Իսուվա երկրի թագավորը և գրավում Խեզարաման, Սուպպիլուիումայի մահից հետո զահ քարձրացած Արնուվանդա I չի կարողանում դիմադրել հայասացիների առաջխաղացմանը: Շուտով Աննիային հաջողվում է գրավել խեթական սահմանամերձ Մամուխա քաղաքը և քաղաքի վրա զորքեր ու ավար վերցնել: Արնուվանդայից հետո զահ քարձրացած Մուրսիլ II-ին հաջողվեց կարճ ժամանակում կասեցնել հարևան երկրների և ցեղերի այդ առաջխաղացումը: Իր թագավորման առաջին վեց տարիներին Մուրսիլը համառ պատերազմներ է մղում կասկայացիների ու արզավացիների դեմ: Տիրեա երկրի դեմ հաղթական արշավ ձեռնարկելուց հետո Մուրսիլ II 1338 թ. (մ. թ. ա.) իր իշխանության յոթերորդ տարում քարեկամական մի քանի նամակներ, ինչպես և դեսպաններ է ուղարկում Հայասա-Ազգի, Աննիայից պահանջելով ետ վերադարձնել Հայասայում ապաստան գտած խեթական ստրուկներին և Իստիտինա ու Դանկուվա քաղաքներից վերցրած զերիներին: Աննիայից մերժում ստանալով, նույն թվականին Մուրսիլ II հարձակվում է Հայասա-Ազգիի սահմանային Ուրա քաղաքի վրա և ճակատամարտ տալիս:

Մուրսիլի այս արշավանքի մասին նրա տարեգրությունը հետևյալն է պատմում:

«...Ազգի քաղաքի՝ երկրի տերը ինձ հետևյալ [պատասխանը գրեց] «Ինչ վերաբերում է նրան, որի մասին դու ինձ գրում ես, չեմ կարող այն զերիներին, որոնք այստեղ ինձ մոտ են եկել, բեզ վերադարձնել, չնայած դու նրանց պահանջում ես...»:

Ես էլ նորից հետևյալ պատասխանը գրեցի. «Իսկ եկել և քո երկրի սահմանի մոտ դիրքեր եմ գրավել: Ես երկիրը շնորհունեցի, բեզնից գերի, եղ և ոչխար ավար շտարա, բայց դու Արեգիս դեմ ելար, եկար Դանկուվա քաղաքի երկրի վրա հարձակվելիք և դատարկեցիր: Աստվածները թող իմ կողմից հանդես գան և դատաստանը իմ օգտին վճռեն»: Քանի որ նա սկսեց ինձ թշնամական խոսքեր ասել, ապա ես թշնամի դառնալով, արշավի ելա Ուրա քաղաքի վրա, օրը Ազգի քաղաքի երկրի առաջին սահմանաբերդն էր և զառիվայրի վրա էր գտնվում: Ով այս նամակը... կիսի թող [մարդ] ուղարկի տեսնելու, թե Ուրա քաղաքը ինչպես է կառուցված...»¹¹:

¹⁰ J. Friedrich, նշված աշխատությունը:

¹¹ E. Forrer, Die Boghazköi-Texte in Umschrift (2BoTU), Leipzig, 1926, II, h. 4/2 № 48.

Սակայն Մուրսիլ II-ի առաջին արշավանքը ոչ մի օգուտ չբերեց խեթերին, Հավանաբար նրան չհաջողվեց Ուրա սահմանադաշինքի այն կողմն անցնել, քանի որ հաջորդ տարում՝ 1337 թ. նա նորից վերսկսեց իր բանակցությունները Աննիայի հետ և պահանջեց ետ վերադարձնել Հայաստանում ապաստան գտած խեթական ստրուկներին ու գերիներին։ Մշտապես խոստումներ տալով խեթական թագավորին, Աննիան ամեն կերպ ձգձգում էր բանակցությունների ընթացքը և ի վերջո հրաժարվում ստրուկներին ու գերիներին ետ վերադարձնելու մտքից, Այդ բանակցությունները տևեցին շուրջ մեկ տարի և անարդյունք վերջացան խեթերի համար։ Աննիան իր հերթին Մուրսիլից պահանջում էր ետ վերադարձնել հայաստական գերիներին և առաջարկում է կազմակերպել գերիների փոխանակում։

1336 թ. օգտվելով հարմար այն առիթից, որ Մուրսիլ II արշավել է Կիզվատնա երկրի վրա, Աննիան վերստին հարձակվում է Խստիտինա և Կաննուվարա քաղաքների վրա։ խեթական մի բանակ նուվանցա զորահրամանատարի գլխավորությամբ շտապ կարգով օգնության է հասնում շրջապատված Կաննուվարա քաղաքին։ Հայաստացիները, որոնք ռազմի դաշտ էին հանել 7000 մարտականքեր և 10000 հետևակ զինվորներ, Կաննուվարա քաղաքի տակ տեղի ունեցած ճակատամարտում պարտություն են կրում¹²։ Նույն տարվա (1336) վերջին Հայաստալի վրա կրկին հարձակվելու մտադրությամբ Մուրսիլ II Կարեմեշից գալիս է Թեղարամա երկիրը և միանում է Նուվանցայի զորքերին։ Սակայն Նուվանցան և մյուս զորավարները խորհուրդ են տալիս Մուրսիլին հրաժարվել դեպի Հայաստան-Ազգիկ կատարվելիք արշավանքի մտադրությունից, քանի որ արդեն տարվա վերջն էր և եղանակները ցրտել էին։ Հաշվի առնելով զորավարների ցանկությունը Մուրսիլը իր մտադրությունը փոխում է և բանակը հանգստի համար տանում է Խարրանս քաղաքը¹³։

Հաջորդ, իր թագավորության 10-րդ տարում, 1335 թ. (մ. թ. ա.) Մուրսիլ II նորից, երկրորդ անգամ արշավանքի է դիմում դեպի Հայաստան-Ազգիկ Գարնանը Մուրսիլը Խսուվայից հարավ գտնվող սահմանամերձ Խնդալավա քաղաքում կենտրոնացնելով իր զորքերը, պատրաստվում է հարձակվելու հայաստական Արիուս և Դուկկամա քաղաքների վրա։ Հայաստացիները որոշում են ցերեկով ճակատամարտ չտալ և պատրաստվում են գիշերը հանկարծակիի բերել խեթերին։ Իրագել լինելով հայաստացիների մտադրությանը, Մուրսիլ II հրահանգում է բանակին կազմ ու պատրաստ լինել գիշերային հարձակմանը։ Սակայն հայաստացիները հրաժարվում են այդ մտադրությունից։ Մուրսիլը զորքը մոտեցնում է «ծովի մեջ» գտնվող Արիպսա քաղաքին, որի բնակիչները քաշվում են լեռները։ Առանց մեծ կորուստների Մուրսիլը գրավում է Արիպսան, ավարի մատնում այն։ Արիպսայում մեկ օր մնալուց հետո, Մուրսիլը շարժվում է դեպի հայաստական Դուկկամա քաղաքը։ Դուկկամացիները առանց որևէ դիմադրության իրենց հավատարմությունն ու հպատակությունն են հայտնում Մուրսիլին և հանձնում քաղաքը։ Կատարելով դուկկամացիների խնդրանքը, խեթական թագավորը ավարի չի մատնում քաղաքը և միայն 5000 դուկկամացիների՝ որպես զինվորների տեղափոխում է Խաթթուսա։ Հայաստալի ավագանին տեսնելով, որ երկրի ավելի ամրացված բերդաքաղաքները անհրաժեշտ դիմադրություն չեն ցույցաբերում թշնամու նկատմամբ, ստիպված բանակցությունների մեջ է մտնում Մուրսիլ II-ի հետ։ Հայաստական ավագանին պարտավորվում է մարտակառքեր, հետևակազոր տրամադրել խեթական բանակին, ինչպես և ետ վերադարձնել խեթական գերիներին։ Հայաստական ավագանու կողմից հավատարմության երդում ստանալով, Մուրսիլը վերադառնում է Խաթթուսա, Խույնիսկ ձեռք շտալով Հայաստալի մյուս քաղաքներին։ Մուրսիլի իշխանության 10-րդ տարում խեթերի ռազմական արշավանքները նկարագրող թագավորական տարեգրությունը վկայում է․

«...Երբ գարունը եկավ, երկրորդ անգամ դարձյալ ճամփա ընկա դեպի Ազգիկ քաղաքի երկիրը և Խնդալավա քաղաքում զորքերի ստուգատես կազմակերպեցի»։

Քանի որ նա՝ Արեգս, նախկինում Ազգիկ քաղաքի ժողովրդին նվաճել էի, Նուվանցա մեծ մառանապետը (զորահրամանատարը—Ն. Բ.) նրանց էլ հաղթել էր Կաննուվարա քաղաքի տակ, որի համար էլ չհամարձակվեցին այդ օրը ցերեկով ճակատամարտ տալ և իրենց հարձակումը գիշերվան հետաձգեցին, ասելով։ «Գիշերը պիտք է հարձակվենք նրա վրա»։

Երբ նա՝ Արեգս լսեցի, որ Ազգիկ քաղաքի մարդիկ ցանկանում են գիշերով հարձակում գործել, անմիջապես հրամայեցի բանակին, որպեսզի պատրաստ լինի հարձակմանը ինչպես ցերեկը, այնպես էլ գիշերը։

¹² A. Goetze, Die Annalen des Mursilis, „Mittelungen der Vorderasiatisch-Aegyptischen Gesellschaft“, 1933, № 38, § 33.

¹³ Նույն տեղում, § 34։

Երբ Ազգի քաղաքի մարդիկ այսպիսի պաշտպանված բանակ տեսան... (այստեղ 11 տոռաղճառված է և անընթեռնելի)։ Նու ճառն առաջարկում է համար Արիստա քաղաքի վրա արշավելի։ Այդ Արիստա քաղաքը ծովի մեջ էր դրվում։ Քաղաքի բնակչությունը ժայռոտ և բարձր լեռները բաշխեց և այնտեղ դիրք բռնեց։

Քանի որ ամբողջ երկրի բնակիչները լեռներն էին բաշխել և միայն նրանց զորքերն էին դիրք դրավել, ես՝ Արեգոս, ճակատամարտ տվեցի։

Եվ ինձ, Ամարոսի հոր աստված Մեցցուլան՝ տերս, Արիստա քաղաքի Արեգի աստվածուհին՝ տիրուհին, Խաթթի երկրի Ամարոսի աստվածը և պատերազմի աստվածը և Իշտար աստվածուհին և բոլոր աստվածները, օգնական ելան ու ես առանց ճակատամարտի Արիստա քաղաքը գրավեցի։

Եվ ազատ թողեցի, որ ամբողջ Խաթթուսան մասնակցի ավարտմանը։ Եվ իմ հետևակալիները ու հեծելազորայիները մեծ բանակությամբ բերդապաշար, արջառ, ուլիսար և անթիվ ռազմազորի դուռն։ Եվ ես՝ Արեգոս, այդ օրը նույն Արիստա քաղաքի մեջ մնացի։ Հաջորդ օրը Դուկկամա քաղաքի դեմ կռիվ գնացի։ Երբ Դուկկամա քաղաքի մարդիկ զալս տեսան, ինձ ընդառաջ եկան ու տարերս ընկնելով ասացին, ժՄեր տեր, մեզ Արիստա քաղաքի նման Խաթթի երկրին մի հանձնիր, մեզ Խաթթուսա տար, մենք բեզ զինվոր և հեծելազոր կտանք։ Դրանից հետո ես՝ Արեգոս շթողեցի, որ Դուկկամա քաղաքը ավարի մատնվի և 3000 զերիների շարքերով արքայական պալատ տարա և նրանց զինվոր ու կառավարողի դարձրի։

Երբ Ազգի քաղաքի մարդիկ տեսան, որ իրենց բերդապաշարները գրավելու եմ պատրաստվում, Ազգի քաղաքի բնակիչները, որ ապաստանել էին բարձր ու ժայռոտ լեռներում և նրանց լանջերում, սարսափի մատնվեցին։ Այդ երկրի բնակիչները ինձ ընդառաջ գալով ոտներս ընկան ու ասացին, ժՏե՛ր, մեզ մի ոչնչացրու։ Տե՛ր, մենք բեզ կապառակներ և այսուհետև մեր տիրույթը չառապես զորք ու հեծելազոր պետք է տանք, և Խաթթուսան զերիներին, որոնք զեռես մեզ մոտ են դրվում, ցանկանում ենք բեզ հանձնելու։ Այդ պատճառով էլ ես՝ Արեգոս, նրանց շոշնչացրի և հպատակ դարձրեցի...¹⁴։

1334 թ. մ. թ. ա. դարնանր Մուրսի 11 նորից շարժվում է դեպի Հայաստան-Ազգի, ցանկանալով վերջնական համաձայնության դալ հայաստան ավազանու հետ։ Սակայն լսելով Մուրսի ներքին արշավանքի մասին, Հայաստանի ավազանին խեթական թագավորի մոտ է ուղարկում Խաթթի մանա քաղաքից ժմե Մութթի և նրա միջոցով վերստին հավաստիացնում, որ անպայման ետ կվերադարձվեն խեթական ստրուկներն ու զերիները¹⁵։ Մոտ 1000 խեթական զերիներ կտեսանալուց հետո Մուրսի 11 վերադառնում է Խաթթուսա։

Մուրսի 11-ի դեպի Հայաստան-Ազգի կատարած վերջին երկու արշավանքների ժամանակ այլևս չի հեշտակվում հայաստան և ներսի թագավորի մասին։ Հավանաբար խեթերի դեմ մզած անարդյուն պատերազմների հետևանքով Հայաստան-Ազգի ցեղային ավազանին և ներսի զերիներին արտոնությունները և նրա տեղը դա՛ բարձրացրել Մութթին։

Մուրսի 11-ի մահից հետո Հայաստան-Ազգիի մասին խեթական աղբյուրները այլևս տեղեկություններ չեն հայտնում և միայն Թուրքիայի IV-ի տարեգրության մեջ հիշատակվում է, որ խեթերին սահմանակից կասկա, Ազգի և Լուկա երկրները իրեն թշնամի էին։

Մ. թ. ա. XII դարի վերջերին, ժողովուրդների հարվածների տակ ընկնում է խեթական թագավորությունը և որոշ ժամանակ անց, երբ փոյուղիացիները հայտնվեցին նփրատի ավազանում, անկում է ապրում նաև հայաստան ցեղային միությունը։ Ասորեստանյան, ուրարտական և ապա հունական աղբյուրները լուրս են Հայաստան-Ազգիի մասին։ Հայաստանի մի մասը հավանաբար տեղաշարժ կատարեց դեպի արևելք, իսկ մյուս մասը հետագայում ձուլվեց խեթերի, Հայաստանի տերիտորիան մտած փոյուղիական մուշկերի և այլ ցեղերի հետ։

¹⁴ Նույն տեղում, 10-րդ տարվա արշավանքները։

¹⁵ 7B6TU, 58B, IV, § 107.

Л. А. Барсегян

ИЗ ВОЕННО-ПОЛИТИЧЕСКОЙ ИСТОРИИ ХАЙАСА-АЗЗИ

Р е з ю м е

Как свидетельствуют хеттские тексты, в конце XV века до н. э. основными противниками хеттов на севере и востоке страны являлись каскайские и хайасские племена, которые своими частыми нападениями нередко подвергали серьезной опасности даже столицу хеттского государства.

Согласно сохранившимся письменным источникам, одним из первых царей Хайаса-Аззи был Каранни, который, заключив союз с каскайцами, на протяжении двадцати лет (1400—1380 гг. до н. э.) организовывал военные походы против хеттов и занял целый ряд пограничных городов хеттского государства. Хеттский царь Тутхалия III-и, мобилизовав свои силы, направил против Хайасы сильную армию во главе со своим сыном Суппилулиумой. Хеттская армия под хайасским городом Куммаха окончательно нанесла поражение Каранни.

Спустя некоторое время, уже при хеттском царе Мурсила II-ом хайасский царь Аннина, заключив союз с восставшими против хеттов царями стран Арзава, Кизватна и Типпия, напал на хеттов. Хеттский царь в течение 1338—1335 гг. до н. э. предпринял три похода против Хайасы и захватил ее.

В конце XII в. до н. э. хеттское государство пало под ударами «морских народов», а спустя некоторое время, когда фригийцы появились в бассейне реки Евфрат, распался также союз хайасских племен.